այլ բարեձև մի եկեղեցի առաջս հանդիպեցաւ. մտայ ներս, տեսայ որ կաթոլիկաց եկեղեցի է. շէնքին ձևը, կոկութիւնն այնպէս կը ցուցնէր, որ եկեղեցւոյս ժողովուրդն թէպէտ քիչ, այլ ունևոր մարդիկ են։ Եկեղեցւոյն ծառայն ինձ ծանօթ մէկն էր, որոյ հրաւիրանօք՝ մտայ քահանային տունը. ծերունի երէցն ընդունելով իմ յարգութիւնս՝ հարցուց ռուսերէն թէ « Ի՞նչ ազգէ ես, մի լեզուաւ կարելի է խօսիլ հետդ » այդ հարցմունքը ինձ տարօրինակ երևցաւ, իբրև թէ ինքն ամենայն լեզուաց տեղեակ, ամեն ազգին հետ կարող է իւր լեզուաւ խօսիլ. փոքր մի նենգութեամբ՝ կամ լաւ ևս պատժել ուզելով փրանկ երիցուն մեծախօսութիւնը, պատասխանեցի թէ « Հայ քահանայ եմ, Նախիջևան կ'երթամ գործով, և թէ շատ հաճելի է « ինձ հայերէն խօսիլը »։ — « Խնդրում եմ, նստէք ». ասաց փրանկ երէցն։ Դորա հայերէն խօսիլն այն աստիճանի գիս շփոթեց, որ հազիւ զարմացումս զսպելով, ընորհակալ եղայ, ծերը զուարթանալով և իւր յաղթանակին վրայ սիրտը գոհ, ձեռքը երկնցընելով՝ օդոյն մէջ կիսաբոլոր ձև մի անելով, հայերէն այս խօսքերը կ'արտաբերէր, « Եւ քարոզեալ և աւետարանեալ » զմայլեցայ, մնացի յաղթահարեալ՝ ծեր երիցուն դիմաց. հայերէն սկսայ շարունակել խօսակցութիւնը, այլ նա ինձ բացատրեց ռուսերէն, որ շատ տարի առաջ Աժտերխան քահանայութիւն անելով՝ ազգայնոց հետ շատ յարաբերութիւններ ունեցել է, որով և սորվել է հայերէն, այլ ապա երկար միջոց չխօսելով՝ կորուսել է վարժութիւնը։ Պատուական ծերոյն մօտ քանի մի ժամ մնալէն վերջը՝ դարձայ 'ի նաւ. որ երեկոյեան 11 մնալով անդ, գիշերով մեկնեցաւ 'ի Մարիապոլ և առա-